

ԱՌՆԱԼԴՈՒՐ ԻՆԴՐԻԴԱՍՈՆ

ՊԻՂԾ ԱՐՅՈՒՆ

Թարգմանիչ՝ Ալեքսանդր Աղաբեկյան



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2013



Mýrin (Jar City), Arnaldur Indriðason

Ինդրիդասոն, Առնալդսոն

Պիղծ արյուն: - Եր.: Գիտանք, 2013 - 252 էջ.

Իր բնակարանում հայտնաբերված տարեց տղամարդու սպանությունը բացահայտող միակ բանալին մարդասպանի թողած խորհրդավոր երկտողն է և մի փոքր աղջկա գերեզմանի լուսանկարը: Հետաքննությունը վարող ոստիկանության տեսուչ Էրլենդուրը հայտնաբերում է, որ սպանվածը տարիներ առաջ մեղադրվել է, բայց չի դատապարտվել չապացուցված հանցագործության համար: Գուցե անցյալի մեղքե՞րն են հետապնդում նրան: Հետաքննելով անցյալի գործերը՝ Էրլենդուրը դատափորձագետների օգնությամբ բացահայտում է շատ ավելի կարևոր գաղտնիքներ, քան այդ տղամարդու սպանությունն է՝ գաղտնիքներ, որոնք մարդիկ խնամքով թաքցրել են տարիներ շարունակ:

Այս քրեավեպի հիման վրա 2006թ. նկարահանվել է Jar City անվանումը կրող հանրահայտ կինոնկարը:

Առնալդուր Ինդրիդասոնը Իսլանդիայի ամենահայտնի գրողներից է, գրական հեղինակավոր մրցանակների դափնեկիր: Նրա վեպերը թարգմանվել են ավելի քան 26 երկրում և վաճառվել շուրջ հինգ միլիոն տպաքանակով:

ISBN 978-9939-810-22-5

© Arnaldur Indridason, 2000

Title of the original Icelandic edition: Mýrin

Published by agreement with Forlagid Publishing, www.forlagid.is

© *Գիտանք*, հայերեն թարգմանության և ձևավորման համար, 2013

Դիակին դրված թղթի կտորին մատիտով ընդամենը երեք բառ էր գրված: Ընդամենը երեք բառ, որոնց իմաստը էրլենդուրը չէր հասկանում:

Հանգուցյալը մոտ յոթանասուն տարեկան տղամարդ էր: Իր աջ կողքին պառկած էր հատակին փոքր հյուրասենյակի բազմոցի մոտ, հագին կապույտ վերնաշապիկ էր և բաց շագանակագույն վելվետե տաբատ: Տան մաշիկներով էր: Գլխի մազերը սկսել էին նոսրանալ և գրեթե լիովին ճերմակ էին: Ներկված էին գլխի խորը վերքից հոսած արյունով: Դիակի կողքին հատակին ընկած էր սուր եզրերով մի մեծ ապակե մոխրաման, որը նույնպես արյունոտ էր: Սրճի սեղանիկը շուռ էր տված:

Բնակարանը Նորդուրմիրիում էր՝ երկհարկանի տան նկուղում: Տան փոքրիկ բակը երեք կողմից շրջափակված էր քարե ցանկապատով: Ծառերի տերևները արդեն թափվել էին և հաստ գորգով ծածկել բակն ու գետինը. դրանց ծուռունուռ ճյուղերը վեր էին ձգվում և կորչում երկնքի խավարում: Ինքնաշարժի տնակը տանող խճուղով ժամանել էր Ռեյկյավիկի ոստիկանության քրեական հետաքննության ջոկատը: Սպասում էին տարածքի դատափորձագետ բժշկին, որը պետք է ստորագրեր մահվան հավաստագիրը: Դիակը հայտնաբերվել էր մոտ տասնհինգ րոպե առաջ: Ռեյկյավիկի ոստիկանության տեսուչ էրլենդուրը դեպքի վայր էր հասել առաջինների թվում: Ուր որ է պետք է հայտնվեր իր գործընկեր Սիգուրդուր Օլին:

Հոկտեմբերի մթնշաղը պատել էր քաղաքը. հորդ անձրև էր տեղում. իսկական աշնանային փոթորիկ էր: Ինչ-որ մեկը հյուրասենյակում վառել էր սեղանի լամպը, որի աղոտ լույսը լուսավորում էր շրջապատը: Սենյակի մյուս իրերին ոչ ոք առաջմ չէր դիպել: Հայտնվեցին դատափորձագետները և սենյակը ողողեցին եռ-

տանի հենարանին ամրացված հզոր լուսարձակի լույսով: Երլենդուրը հայացքով ընդգրկեց մաշված կահույքը՝ գրապահարանը, շուռ տված սրճի սեղանիկը, անկյունի հին գրասեղանը և հատակի արյունոտ կարպետը: Մի դուռը հյուրասենյակից տանում էր խոհանոց, մյուսը՝ դեպի նեղ միջանցք, որտեղից մուտք կար դեպի երկու սենյակ և զուգարան:

Ոստիկանությանը տեղեկացրել էր վերևի հարկի բնակիչը: Յետկեսօրին դպրոցից վերցնելով երկու որդիներին՝ նա տուն էր վերադարձել և շենքին մոտենալով՝ տեսել, որ նկուղի բնակարանի դուռը բաց է: Դա տարօրինակ էր: Նա ներս էր մայել և ծայն տվել հարևանին՝ պարզելու համար, թե նա արդյոք տանն է: Պատասխան չէր ստացել: Դարծյալ կանչել էր և կրկին պատասխան չէր ստացել: Իր ընտանիքը արդեն մի քանի տարի բնակվում էր վերևի հարկի բնակարանում, բայց նկուղի տարեց բնակչին վատ էր ճանաչում: Ինը տարեկան ավագ տղան հոր պես զգուշավոր չէր և մի ակնթարթում ներս էր վազել նկուղի հյուրասենյակ: Յաջողո՞րդ պահին տղան դուրս էր թռել և անվրդով դեմքով հայտնել, որ բնակարանում դիակ է պառկած:

- Շարժանկար շատ ես դիտում, - պատասխանել էր հայրը, զգուշորեն ներս էր մտել և հյուրասենյակի հատակին հայտնաբերել մեռած հարևանին:

Երլենդուրը գիտեր մեռած մարդու անունը. դա մշված էր դռան զանգի կոճակին: Սակայն, ցանկանալով խուսափել ծիծաղի առարկա դառնալու վտանգից, նա ձեռքերին քաշեց բարակ ռետինե ձեռնոցները և նախասենյակում կեռին կախված բաճկոնի գրպանից հանեց հանգուցյալի դրամապանակը: Տղամարդու անունը Յոլբերգ էր, 69 տարեկան էր. դրամապանակում լուսանկարով վճարաքարտ կար: Գտնված էր մեռած իր տանը: Ենթադրաբար սպանվել էր:

Երլենդուրը շրջեց բնակարանով՝ փնտրելով պարզագույն հարցերի պատասխանները: Նրա աշխատանքը ակնհայտ բաներ հետաքննելն էր: Առեղծվածներով զբաղվում էին դատափորձագետ-

ները: Առայժմ նշեց, որ կոտրանքի հետքեր չկան ո՛չ դռներին, ո՛չ էլ պատուհաններին: Այն տպավորությունն էր ստեղծվում, որ տանտերը ինքն է ներս թողել մարդասպանին:

Վերևի հարևանները ամենուրեք ոտնահետքեր էին թողել՝ և՛ նախասենյակում, և՛ հյուրասենյակի կարպետին. դուրսը անձրև էր գալիս: Հարձակվողը հավանաբար նույնպես հետքեր էր թողել, եթե միայն կոշիկները մուտքի մոտ չէր հանել: Էրլենդուրը մտածեց, որ ըստ երևույթին նա սաստիկ շտապում էր և հազիվ թե հնարավորություն ուներ հանելու կոշիկները:

Դատափորձագետները փոշեկուլ ներս բերեցին. փոշու ամենամանր մասնիկները կարող էին կարևոր հանցանշան լինել: Հետո փնտրեցին մատնահետքեր և ցեխի կտորներ, որոնք չէին պատկանում տանտիրոջը: Փնտրեցին որևէ բան, որը այս տնից չէր: Որը բերել էր նա, ով հատակին դիակ էր թողել:

Ելնելով տեսածից՝ Էրլենդուրը որոշեց, որ տանտերը առանձնապես հյուրընկալ չէր եղել: Սուրճ չէր մատուցել. պարզ էր, որ վերջին մի քանի ժամվա ընթացքում խոհանոցում սրճեփ չէր օգտագործվել: Ոչ մի նշան չկար, որ հյուրը թեյ է խմել. բոլոր բաժակները պահարանում էին: Ապակյա ըմպանակները նույնպես իրենց տեղում էին: Սպանվածը ակնհայտորեն կարգ ու կանոն էր սիրում: Ամեն ինչ մաքուր էր և կարգի բերված: Երևի նա լավ ծանոթ չէր հարձակվողի հետ: Հավանաբար հյուրը առանց ավելորդ խոսքերի հարձակվել էր նրա վրա, երբ դուռը բացվել էր իր առաջ: Նույնիսկ կոշիկները չէր հանել:

Կոշիկները հանած՝ արդյո՞ք հնարավոր է մարդ սպանել:

Էրլենդուրը նայեց շուրջը և մտածեց, որ պետք է չչեղվի հետաքննությունից:

Հյուրը ակներևաբար շտապում էր. հեռանալիս նույնիսկ դուռը չէր փակել հետևից: Երևում էր, որ հարձակվել էր հանպատրաստից և առանց նախազգուշացման: Սենյակում պայքարի հետք չկար: Տանտերը ըստ երևույթին պարզապես անկենդան ընկել էր հատակին, գլխով դիպել սրճի սեղանիկին ու դա շուռ տվել: Ա-

ռաջին հայացքից ամեն ինչ իր տեղում էր: Երլենդուրը կողոպուտի ոչ մի նշան չէր տեսնում: Պահարանների դռները ամուր փակված էին, արկղերը նույնպես, իրենց տեղում էին նոր համակարգիչը, հին տեսագրիչը և դրամապանակը՝ մուտքի դռան մոտ կախված բաճկոնի գրպանում. այնտեղ երկուհազարկրոնանոց թղթադրամ կար և երկու քարտ՝ վարկաքարտ ու հաշվեքարտ:

Հավանաբար հարձակվողը ճանկել էր ձեռքի տակ ընկած առաջին առարկան՝ մոխրամանը, և հարվածել տանտիրոջ գլխին: Մոխրամանը պատրաստված էր հաստ, ծանր կանաչ ապակուց և կշռում էր ամենաքիչը մեկուկես կիլո: Սպանության գերազանց գործիք էր: Մարդասպանը դժվար թե դա բերել էր իր հետ և արձնաթափախ թողել՝ այստեղ՝ հյուրասենյակի հատակին:

Այդ ամենը ներկայացնում էր կատարվածի ակնհայտ պատկերը. տանտերը բաց էր արել դուռը և ներս հրավիրել այցելուին կամ էլ առնվազն ուղեկցել էր նրան հյուրասենյակ: Գուցե նա ճանաչում էր այցելուին, թեև դա պարտադիր չէր: Այցելուն նրան ուժգին հարված էր հասցրել մոխրամանով և արագ փախել՝ չփակելով բնակարանի մուտքի դուռը: Ամեն ինչ պարզ էր:

Բացի մարդասպանի թողած նամակից:

Դա գրված էր A_4 չափի տողած թղթի կտորին, որը ըստ երևույթին պոկված էր գալարակազմ տետրից և միակ ապացույցն էր, որ այստեղ կանխամտածված սպանություն է կատարվել. նամակը ենթադրում էր, որ այցելուն եկել էր սպանելու որոշակի մտադրությամբ: Այլ ոչ թե հյուրասենյակում հայտնվելով՝ հանկարծակի բռնվել էր սպանելու ցանկությամբ: Երկտող էր թողել: Երեքբառանոց նախադասություն, որը Երլենդուրը չէր հասկանում: Գուցե երկտողը մինչև այստեղ գա^րլն էր գրել: Սա ևս մի պարզ հարց էր, որի պատասխանը հարկավոր էր գտնել: Երլենդուրը մոտեցավ հյուրասենյակի անկյունում գտնվող գրասեղանին, որին խառնիխուռն սփռված էին փաստաթղթեր, հաշիվներ, ծրարներ ու թղթեր: Դրանց վրա ընկած էր գալարակազմ տետր, որի մի էջի անկյունը պոկված էր: Երլենդուրը հայացքով փնտրեց մատիտը, որը հավա-

Մաքար օգտագործվել էր երկտողը գրելու համար, բայց չգտավ: Ձննելով սեղանի տակը՝ հայտնաբերեց մի մատիտ: Ոչ մի բանի ձեռք չտվեց: Նայում էր ու մտածում:

- Կարծես իսկական իսլանդական սպանություն է, չէ՞, - հարցրեց խուզարկու Սիգուրդուր Օլին, որը աննկատ ներս էր մտել նկուղ և այժմ կանգնած էր դիակի մոտ:

- Ի՞նչ, - ասաց մտքերի մեջ խորասուզված Երլենդուրը:

- Ողորմելի ու անիմաստ սպանություն է. սպանողը չի էլ փորձել դա քողարկել և հանցանշանները խեղաթյուրել կամ թաքցնել:

- Այո, - ասաց Երլենդուրը: - Հուզական իսլանդական սպանություն:

- Եթե իհարկե նա չի ընկել սեղանին և գլուխը խփել մոխրամահին, - ասաց Սիգուրդուրը:

Սիգուրդուրի հետ եկել էր իրենց գործընկեր Էլինբորգը: Երլենդուրը սահմանափակեց ոստիկանների, դատափորձագետների և բուժսպասավորների տեղաշարժը, իսկ ինքը գլուխը կախ շրջում էր բնակարանով մեկ:

- Եվ ընկնելիս մի անհասկանալի ուղե՞րձ է գրել, - ասաց Երլենդուրը:

- Գուցե դա նրա ձեռքին է եղել:

- Այս երկտողից մի բան հասկան՞ում ես:

- Գուցե Աստված է գրել, - ասաց Սիգուրդուրը: - Գուցե և մարդասպանը, չգիտեմ: Մեջտեղի բառը հետաքրքրաշարժ շեշտադրում ունի: Գլխատառերով ՆԱ:

- Չեմ կարծում, թե նա շտապում էր: Մեջտեղի բառը մեծատառ է, իսկ մյուս երկուսը՝ փոքրատառ: Այցելում գրելիս չէր շտապում: Բայց դուռը հետևից չէր փակել: Դա ի՞նչ է նշանակում: Սպանում է տանտիրոջը և փախչում, բայց թղթի կտորին գրում է այս առեղծվածային բառերը և չի գլանում շեշտել մեջտեղի բառը:

- Հավանաբար «ՆԱ»-ն վերաբերում է նրան, - ասաց Սիգուրդուրը: - Նկատի ունեմ սպանվածին: Էլ ո՞ւմ կարող է վերաբերել:

- Չգիտեմ, - ասաց Երլենդուրը: - Ի՞նչ իմաստ ունի այդպիսի

երկտող թողնելը, այն էլ զոհի մարմնին: Ի՞նչ է ուզում դրանով ասել: Մե՞զ է դիմում: Ինքն իրե՞մ: Թե՞ զոհին:

- Խելառի մեկն է, - ասաց էլիմբորգը և կռացավ՝ նամակը վերցնելու, բայց երլենդուրը կանգնեցրեց նրան:

- Գուցե նրանք մի քանի՞սն են եղել, - ասաց Սիգուրդուրը: - Նկատի ունե՞մ հարձակվողները:

- Ձեռնոցներդ մի՛ մոռացիր, էլիմբորգ, - ասաց երլենդուրը, ասես երեխայի դիմելիս լիներ: - Մի՛ փչացրու հանցանշանը: Երկտողը գրվել է այնտեղ, - շարունակեց՝ մատնացույց անելով անկյունի սեղանը: - Թուղթը պոկված է զոհի տետրից:

- Գուցե նրանք մի քանի՞սն են եղել, - կրկնեց Սիգուրդուրը: Մտածեց, թե կարևոր միտք է տալիս:

- Հա, - ասաց երլենդուրը: - Կարող է:

- Մի քիչ դաժան է, - ասաց Սիգուրդուրը: - Նախ սպանում ես ծերունուն, հետո նստում երկտող ես գրում: Ամուր ջղեր պետք է ունենալ, չէ՞: Նման բան անողը ի՞նչ շան տղա պիտի լինի:

- Կամ անվախի մեկը, - ասաց էլիմբորգը:

- Կամ էլ մեկը, ով տառապում է փրկիչի բարդությով, - քմծիծաղեց երլենդուրը՝ կռանալով ու վերցնելով երկտողը:

Այո, փրկիչի բարդությ, այն էլ շատ թունդ, մտածեց նա՝ ուսումնասիրելով երեք բառը: